ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, РЕЦЕНЗИИ

А. М. ТЕЛУНЦ, *Условия и особенности развития науки в социалистическом обществе*. Изд. АН Арм.ССР, Ереван, 1963, 290 стр., цена 1 р. 13 коп.

Ա. Մ. ԹԵԼՈՒՆՑ, *Գիտության զարգացման պայմաններն ու առանձնահատկությունները սոցիալիստական հասարակարգում*: Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1963, 290 էջ, գին 1 ռ. 13 կոպ.:

Արդի պայմաններում գիտության զարգացումը դառնում է մեր երկրի տնտեսական առաջադիմության վճռական գործոններից մեկը։ Արտադրության վրա գիտության ներգործությունը և ժողովրդի կյանքի բոլոր կողմերի վրա նրա ազդեցությունն անչափ աճում են։ Գիտության նվաճումների լայն օգտագործումը դառնում է սովետական հասարակության արտադրողական ուժերի աննախընթաց զարգացման կարևորագույն ֆակտորը։ Ջափաղանցություն չի լինի ասել, որ առանց գիտության վճռական ներթափանցման նյութական արտադրության ոլորտը, անհնարին է մեր երկրի հիմնական տնտեսական խնդրի՝ կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման իրականացումը։

Կոմունիստական հասարակարգի ծավալուն շինարարությունը, կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը իրենց հերթին նոր, ընդարձակ հորիզոններ են բաց անում գիտության զարգացման համար։ Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագրում ասված է, որ մեր օրերում գիտության ու տեխնիկայի առաջադիմության հեռանկարները հիմնականում կապված են բնական գիտությունների գլխավոր ճյուղերի նվաճումների հետ։ Դրա հետ մեկտեղ ծրագիրը նշում է, որ լայնորեն պետք է զարգանան նաև հասարակական գիտությունները, որոնց տարբեր բնագավառներում աշխատող գիտնականները պետք է ուսումնասիրեն և ընդհանրացնեն կոմունիստական շինարարության պրակտիկան, սոցիալիստական հասարակարգի տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման, ինչպես նաև սոցիալիզմի՝ կոմունիզմի վերաձման հիմնական օրինաչափությունները։

Տարբեր սոցիալական սիստեմների, հակադիր դաղափարախոսությունների առկայության ու նրանց միջև մղվող սուր պայքարի մեր դարաշրջանում գիտությունը չի կարող միատեսակ վերաբերմունքի արժանանալ այդ ուժերի ու գաղափարախոսությունների կողմից։ Գիտության նվաճումներն օգտագործվում են ինչպես առաջադեմ հասարակական ուժերի ու ժամանակակից առաջադիմության հիմնական կրողի՝ սոցիալիստական սիստեմի կողմից, այնպես էլ իր պատմական զարգացման ժամանակաշրջանն ավարտող ուժերի ու սիստեմի կողմից։

Արդի պայմաններում կարևոր նշանակություն է ստանում գիտության զարգացման օրինաչափությունների ու առանձնահատկությունների, նրա նվաճումների գործադրման պայմանների և հարաճուն դերի ուսումնասիրությունը։ Գրախոսվող դիրքը առաջին փորձերից մեկն է այդ պրոբլեմների լուծման ճանապարհին։

Աշխատության առաջին գլուխը նվիրված է գիտության զարգացման ընդհանուր օրինաչափությունների լուսաբանմանը։ Գիտությունը գործում է տարբեր հասարակական ֆորմացիաներում, նրա նվաճումները օգտագործվում են տարբեր նպատակներով, նրա զարգացման բուն իսկ պայմանները էապես տարբերվում են տարբեր ժամանակաշրջաններում ու երկրներում։ Բայց հենց այն պատճառով, որ գիտությունը ամենուրեք հանդիսանում է ամենից առաջ մարդկանց արտադրական գործունեության, հասարակության արտադրական պրակտիկայի, շրջապատող աշխարհի նկատմամբ մարդկանց ակտիվ ներգործության ամփոփման ու ընդհանրացման արդյունք և որ ամենուրեք նրա զարգացման հիմքում ընկած են ամենից առաջ արտադրության պահանջները և առհասարակ հասարակության առաջադիմական զարգացման պահանջները,— գիտությունը պետք է որ ունենա և ունի զարգացման ընդհանուր օրինաչափություններ, որոնք, իհարկե, միատեսակ չեն կարող դրսևորվել տարբեր սոցիալական պայմաններում։ Աշխատության հեղինակը ծանրանում է հատկապես գիտության զարգացման

այնպիսի օրինաչափությունների վրա, ինչպիսիք են՝ գիտության պայմանավորվածությունն արտադրության եղանակով, գիտության զարգացման հարաբերական ինքնուրույնությունը և այդ զարգացման հակասականությունը։

Աշխատության հաջորդ երեք գլուխները նվիրված են սոցիալիստական հասարակարգում գիտության դերի ու նշանակության ուսումնասիրություններ։ Երանցում լուսաբանվում են այնպիսի կարևոր պրոբլեմներ, ինչպիսիք են՝ արտադրության սոցիալիստական եղանակի ու գիտության (գլ. II) և սոցիալիստական վերնաշենքի ու գիտության (գլ. III) փոխհարաբերության հարցերը, ինչպես նաև այն նորը, որ իրենց հետ բերեցին սոցիալիստական արտադրահարաբերությունները գիտության զարգացման և հասարակության կյանքում նրա դերի ու նշանակության աննախընթաց աճի համար (գիտության պլանաչափ զարգացումը, այդ զարգացման առաջընթաց բնույթը, գիտության զարգացման հակասությունների հաղթահարման ուղիները և այլն—գլ. IV)։

«Հեղինակը գիտության պայմանավորվածությունը արտադրության եղանակով իրավացիորեն համարում է նրա զարգացման հիմնական օրինաչափությունը, որովհետև այդ օրինաչափությունն արտահայտում է գիտության հարաբերությունը գիտություն ծնող նյութական պայմանների հետ և որոշում է գիտության տեղն ու դերը հասարակական կյանքում, նրա տվյալների կիրառման բնույթն ու եղանակը։ Ելնելով դրանից, հեղինակը սոցիալիստական հասարակարգի գիտության զարգացման պայմանների ու առանձնահատկությունների հետազոտությունն սկսում է սոցիալիստական հասարակարգի արտադրաեղանակի և գիտության հարաբերակցության հարցի քննարկումից։ Արտադրության սոցիալիստական եղանակը սոցիալիստական հասարակարգի գիտության զարգացման նյութական բազան, աղբյուրն ու գլխավոր խթանն է,— գրում է հեղինակը, չսահմանափակվելով բնավ այդ ընդհանուր դրույթի փաստարկմամբ։ Այդ օրինաչափությունը, ընդգծում է նա, սոցիալիստական հասարակարգում դրսևորում է իր առանձնահատկությունները նրանով, որ «արտադրության սոցիալիստական եղանակը պայմանավորում է գիտության մեջ զարգացման բարձր տեմպերն ու անսահմանափակ հնարավորությունները, արագացնում և ընդլայնում է գիտության՝ արտադրողական ուժի վերածման պրոցեսը, որակական նոր բնույթ տալով այդ պրոցեսին, արմատական փոփոխություն է մտցնում գիտության արտադրական և ամեն տեսակի այլ գործունեության մեջ, ստեղծում է արտադրության, առհասարակ հասարակական պրակտիկայի հետ գիտության փոխգործակցության նոր, առավել ռացիոնալ և ինտենսիվ ձևեր (էջ 69, ընդգծումները հեղինակինն են)։

Աշխատության մեջ հատուկ քննարկման է ենթարկվում գիտության՝ արտադրողական ուժի վերածման մարքսիստական դրույթը։ Գիտությունը արտադրողական ուժ է հանդիսանում ոչ միայն որպես նյութական մարմնավորված գիտելիք, այսինքն՝ երբ գիտության տվյալները մարմնացված են մեքենաների և արտադրության այլ միջոցների մեջ, այլև որպես արտադրականորեն գործող և կիրառվող գիտելիք, արտադրության տեխնոլոգիական և այլ բնույթի ղեկավարման միջոց։ Գիտության՝ արտադրողական ուժի վերածման պրոցեսը հեղինակը քննարկում է առավելապես սոցիալական տեսանկյունից և հանգում այն եզրակացության, որ թեև ճիշտ է, որ արդեն կապիտալիզմի ժամանակ աշխատանքի հասարակականորեն կոմբինացված բնույթը և գիտության զարգացման բարձր մակարդակը հնարավորություն են ստեղծում գիտության նվաճումների արտադրողական կիրառման, հետևաբար և գիտության՝ արտադրողական ուժի վերածման համար, սակայն դրա հետ մեկտեղ կապիտալիստական հասարակարգում գիտությունն անջատվում է անմիջական արտադրողից և հակադրվում նրան՝ որպես խորթ ուժ։ «Դա միանգամայն բնական է մի հասարակության մեջ,— գրում է հեղինակը,— որում առաջադիմությունը ձևոք է բերվում աշխատավորներին ճնշելու, աշխատանքի ռացիոնալիզացիան՝ նրանց ստեղծագործական ընդունակությունները ճնշելու, գիտության զարգացումը՝ ժողովրդական զանգվածներին գիտության բարիքներից և գիտական աշխատանքով զբաղվելու հնարավորություններից զրկելու գնով» (էջ 117)։ Կապիտալիստական արտադրության զարգացումը, հատկապես նրա ավտոմատացումը, պահանջում է արտադրողների մտավոր մակարդակի բարձրացում, բայց միաժամանակ կապիտալիստական կարգերը կաշկանդում են նրանց զարգացումը, մարդկանց դարձնում արտադրության կցորդներ։ Հեղինակը դրան հակադրում է սոցիալիստական կարգերը, որտեղ արտադրության եղանակը արագացնում է և ընդլայնում գիտության՝ արտադրողական ուժի վերածման պրոցեսը, որում էական դեր է խաղում աշխատավորների կուլտուրական, կրթական մակարդակի բարձրացումը։ Սոցիալիստական կարգերը որակական փոփոխություն են առաջացնում ամենից առաջ գլխավոր արտադրողական ուժի՝ նյութական բարիքներ արտադրող մարդկանց մեջ, որի հետևանքով աշխատավորները, որոնք մի ժամանակ սոսկ արտադրության կցորդներ էին, դառնում են նրա

տիրերը, զարգանում ու հարստանում է նրանց հոգևոր աշխարհը, նրանք զինվում են արտադրություններ կառավարելու և ղեկավարելու համար անհրաժեշտ գիտելիքներով։

Գիտությունը արտադրողական ուժ է դառնում ոչ թե ինքնարերաբար, այլ շնորհիվ այն բանի, որ մարդիկ տիրապետում են նրան և արտադրարար կիրառում նրա տվյալները։ Հետևաբար, գիտության արտադրական դերը բարձրացնելու համար պետք է անդադրում աճեցնել այս մարդկանց շարքերը, որոնք տիրապետում են գիտությանը և նրա արտադրական կիրառման միջոցներին, այսինքն՝ ապահովել տեխնիկական ինտելիգենցիայի բարձր աճը և բանվոր դասակարգի ու ամբողջ աշխատավոր ժողովրդի գիտա-տեխնիկական պատրաստություն։ Սովետական իշխանության տարիներին այդ ուղղությամբ կատարվել է հսկայական աշխատանք, որը տվել է իր փայլուն արդյունքը։ Տեխնիկական ինտելիգենցիայի պատրաստման գծով ՍՍՌՄ-ն վաղուց հետ է թողել ամենաղարգացած կապիտալիստական երկրներին, մեր երկրի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական գպրոցները ապահովում են ժողովրդական տնտեսությունը բարձրորակ կադրերով, բանվոր դասակարգի շարքերը լրացվում են պրոֆեսիոնալ-տեխնիկական դպրոցներն ու ուսումնարանները ավարտող բազմամարդ բանակով։ Մեծապես աճում են գիտական աշխատողների շարքերը. այսպես, եթե 1914 թ. Ռուսաստանի տերիտորիայում աշխատում էին մինչև 10,2 հազար գիտական աշխատողներ, ապա 1951 թ. 404,1 հազար, իսկ 1963 թ. վերջերին՝ 566 հազար։ Սոցիալիզմի պայմաններում գիտության արտադրողական ուժի վերածման տեսակետից որակապես նորը հանգում է, հետևաբար, ոչ միայն գիտական նվաճումների տեխնոլոգիական կիրառման ընդլայնմանն ու խորացմանը, այլև այն մարդկանց զանգվածի մեծացմանը, որոնք անմիջականորեն գործադրում են գիտությունը արտադրության մեջ, այսինքն՝ տեխնիկական ինտելիգենցիայի և արտադրության մեջ ֆիզիկական ու մտավոր աշխատանքը միաձուլող բանվորների թվի աճին։ Սրանք այն անհրաժեշտ պայմաններն են, որոնց առկայությամբ գիտությունը, ինչպես ընդգծված է ՍՄԿՊ ծրագրում, լրիվ չափով կդառնա անմիջական արտադրողական ուժ։

Աշխատության մեջ, այնուհետև, ցույց է տրվում, որ սոցիալիստական հասարակարգում գիտության զարգացման և նրա նվաճումների կիրառության նպատակն է աշխատավորների նյութական ու հոգևոր աճող պահանջմունքների ավելի ու ավելի լրիվ բավարարումը։ Արտադրության ոլորտում գիտությունը կիրառվում է արտադրողական ուժերը, արտադրության տեխնիկան ու տեխնոլոգիան զարգացնելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, նյութական բարիքների արտադրությունը զարգացնելու, աշխատանքի պայմանները բարելավելու և աստիճանաբար աշխատանքը աշխատավորների համար կենսական անհրաժեշտություն դարձնելու նպատակով։ Այդ նպատակը, որը բխում է աշխատավոր ժողովրդի կենսական շահերից, պայմանավորում է ամբողջ ժողովրդի շահագրգռվածությունը գիտա-տեխնիկական առաջադիմության, գիտության հիմունքներին տիրապետելու և նրա նվաճումները ըստ հնարավորին լիակատար, իր ժամանակին և արդյունավետ կիրառելու նկատմամբ։ Սոցիալիստական հասարակարգը, պայմաններ ստեղծելով գիտության չտեսնված ծաղկման համար և առաջ բերելով գիտության ու արտադրության օրգանական կապի նոր ձևեր, որոնցում էական նշանակություն ունի անմիջական արտադրողների կողմից գիտության հիմունքներին տիրապետելն ու գիտության նվաճումները կիրառելը, դրանով իսկ բարձրացրել է գիտության արտադրական դերը նաև այն տեսակետից, որ գիտությունը դարձրել է արտադրողական ուժերի հզոր աճի վճռական միջոց։

Գրքի երկրորդ գլխի վերջին բաժնում հեղինակը նշում է, որ սոցիալիստական հասարակարգում գիտության զարգացման ու կիրառման հատկանշական գծերից մեկն այն է, որ մշտապես ընդլայնվում է գիտության կիրառության ոլորտը, և դա ոչ միայն արտադրության մեջ, այլև ամբողջ հասարակական պրակտիկայում։ Բարձրանում է գիտության իմացական դերը, այսինքն՝ գիտությունը դառնում է մարդկանց աշխարհայացքն ընդարձակելու, մտահորիզոնը ընդլայնելու, հոգևոր աշխարհը հարստացնելու անփոխարինելի միջոց։ Գիտությունը սոցիալիստական հասարակարգում կիրառվում է ամենամարդասիրական նպատակներով և այդ պատճառով նրա հեղինակությունն օրավուր բարձրանում է ամբողջ աշխարհի աշխատավոր մարդկության աչքում։

Սոցիալիստական հասարակարգը լայն պայմաններ է ստեղծել նաև հասարակական գիտությունների հզոր զարգացման ու լայն կիրառման համար։ Առաջին անգամ պատմության մեջ այստեղ գիտությունը դառնում է հասարակության կառավարման ու ժողովրդական տնտեսության պլանավորման տեսական բազիս և աշխատավորների կոմունիստական դաստիարակության հզոր միջոց։

Աշխատության երրորդ գլուխը նվիրված է սոցիալիստական հասարակարգի գիտության և վերնաշենքի փոխհարաբերությանը։ Ի տարբե-

թյուն անտագոնիստական հասարակարգերում տիրապետող դասակարգերի վերնաշենքի, որ արտահայտել և սպասարկել է այդ դասակարգերի շահերը և այդ պատճառով միշտ էլ այս կամ այն կերպ հակասության մեջ է գտնվել գիտության, հատկապես հասարակական գիտության զարգացման օբյեկտիվ ընթացքի հետ, կաշկանդել է նրա ազատ զարգացումն ու լայն կիրառությունը, նրա վզին փաթաթելով հակագիտական գաղափարախոսություն և աշխարհայացք.— սոցիալիստական հասարակարգի վերնաշենքը, արտահայտելով աշխատավոր ժողովրդի շահերը, հանդիսանում է մի մեծագույն ուժ, որը խթանում է գիտության աճն ու զարգացումը, նրա նվաճումների լայն կիրառումը։ Սոցիալիստական հասարակարգում վերնաշենքն ինքը խարսխվում է գիտության վրա և գա որակական նոր բնույթ է տալիս վերնաշենքի ու գիտության փոխհարաբերությանը։ Դառնալով մարդկանց գործունեության տեսական բազան՝ ինչպես բնության հետ նրանց ունեցած հարաբերության, այնպես էլ նրանց հասարակական հարաբերությունների մեջ, գիտությունը հանգես է գալիս որպես մեծագույն վերափոխիչ ուժ, գործում է վերնաշենքի միջոցով և նրա հետ միասին։ Գիտությունն ի գեմս սոցիալիստական վերնաշենքի գտնում է իր զարգացման հզոր խթանը, այդ զարգացմանը համապատասխանող կազմակերպական ձևեր, մշտապես զգում է նրա լայն աջակցությունն ու ստանում նրանից իր նվաճումների կիրառման համար անհրաժեշտ միջոցներ։

Դեռևս սովետական իշխանության առաջին տարիներին Վ. Ի. Լենինը բացահայտել էր այն որակական նոր հատկանիշները, որոնք բնութագրում են կուլտուրական ու գիտական առաջադիմությունը նոր հասարակարգում. ժողովրդի աճող շահագրգռվածությունը գիտության ու կուլտուրայի նկատմամբ, վերնաշենքի խթանող և ղեկավարող ֆունկցիան՝ հասարակության գիտական ու կուլտուրական վերափոխման բնագավառում։ «Կոմունիստական պարտիան և սոցիալիստական պետությունը,— ասված է դրախոսվող աշխատության մեջ,— գիտական աշխատանքի կազմակերպումն ու ծավալումը մշտապես գիտել են որպես իրենց կողմից մարմնավորվող հասարակական կյանքի արմատական վերափոխմանն ուղղված քաղաքականության կարևորագույն տեղամասը։ Տնտեսական, կուլտուրական և քաղաքական բնույթի ոչ մի միջոցառում չի անցկացվում և իրականացվում առանց գիտության անմիջական և ակտիվ մասնակցության և, համապատասխանաբար, դիտության բնագավառում ոչ մի միջոցառում չի անցկացվում, որն անչափված լիներ երկրի ընդհանուր զարգացման պրոցեսից, պետության քաղաքականությունից։ Գիտությունը մտել է ժողովրդի կյանքի մեջ այնքանի հնարավորով, որ նրա կենսական ֆունկցիաները միաձուլվել են ամբողջ երկրի կենսագործունեության հետ. նեռուսվել են կոմունիստական շինարարության կենսանի պրակտիկայի մեջ» (էջ 191, ընդգծումը հեղինակինն է)։

Աշխատության եզրափակիչ հինգերորդ գլուխը նվիրված է գիտության աճող գերին կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում։ Այստեղ հեղինակը քննարկում է (հիմնականում ՍՄԿԿ XXII համագումարի նյութերի վերլուծության միջոցով) հետևյալ երեք կարևոր պրոբլեմները. գիտության դերը կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման, աշխատանքի բնույթի ու սոցիալիստական հասարակական հարաբերությունների բնույթի փոփոխման և կոմունիստական հասարակության մարդու ձևավորման բնագավառում, այսինքն՝ «զուտ» նյութական արտադրության ու հասարակական հարաբերությունների ոլորտում և բարոյական-կրթական մարզում։ Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանի այդ կարևորագույն խնդիրները՝ կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը, սոցիալիստական հասարակական հարաբերությունների կատարելագործումը, նոր, կոմունիստական հարաբերությունների կազմավորումը և կոմունիստական հասարակարգի մարդու ձևավորումը գիտության առջև նոր պահանջներ են դնում և բարձրացնում նրա դերը հասարակական կյանքի բոլոր բնագավառներում։ Գիտությունը կոչված է ապահովելու ժողովրդական տնտեսության էներգետիկ բազայի զարգացման պահանջները՝ ուժեղացնելու երկրի էներգետիկական ռեսուրսների ուսումնասիրությունը, մշակելու միջոցներ էներգիայի բնական աղբյուրների լավագույն օգտագործման համար, բացահայտելու էներգիայի նոր աղբյուրներ և ջերմային և այլ տեսակի էներգիան էլեկտրական էներգիայի ուղղակի վերափոխման միջոցներ, ինչպես և ավելի արդյունավետ օգտագործելու ատոմային էներգիան և լուծելու ջերմամիջուկային ռեակցիայի ղեկավարման պրոբլեմը։ Մեծ խնդիրներ են դրված գիտության առջև արդյունաբերության կոմպլեքսային մեքենայացման ու ավտոմատացման, քիմիական արդյունաբերության զարգացման, բնական հարստությունների օգտագործման բնագավառներում։ Սովետական ժողովրդի վճռականությունը՝ կարճ ժամանակամիջոցում վերջ տալու գյուղատնտեսության ետ մնալուն և ապահովելու սովետական երկրին արժանի բարձր զարգացած գյուղատնտեսական արտադրություն,

նոր պահանջներ է ներկայացնում բիոլոգիական և գյուղատնտեսական գիտություններին։

Գիտությունը կարևոր դեր ունի նաև աշխատանքի բնույթի փոփոխման և սոցիալիստական հասարակական հարաբերությունների կատարելագործման բնագավառում։ «Գիտությունը ասում է հեղինակը,— կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում իր նվաճումներով նպաստում է ազատ մարդկանց համագործակցության հասարակական հարաբերությունների զարգացմանը, աշխատանքի կազմակերպման ավելի բարձր ձևերի ծագմանը, և այդ գերը նա կատարում է նրանով, որ տիրապետելով լայն գանգվածներին՝ բարձրացնում է նրանց ստեղծագործական ակտիվությունը, գիտակցականությունը, դառնում է կոմունիզմ կառուցողների հոգևոր հարստացման, կոմունիստական հասարակարգի մարդու ձևավորման հզոր գործոն» (էջ 277—278)։

Սովետական երկրի գիտությունը մինչև այժմ պատվով է կատարել իր առջև դրված խնդիրները։ Սոցիալիստական հզոր էկոնոմիկայի, սոցիալիստական հասարակարգի բոլոր նվաճումների մեջ մարմնացած է նաև սովետական գիտությունը, սովետական գիտնականների արդյունավետ աշխատանքը։ Սովետական գիտությունը ճանաչում է գտել ամբողջ աշխարհում իր փայլուն նվաճումներով և իր մարդասիրական գաղափարներով։ Նա է առաջինը բացել տիեզերքի ճանապարհը, ստեղծել առաջին ատոմային էլեկտրակայանը, ծանրակշիռ ավանդ դրել գիտական մտքի բոլոր բնագավառներում, մի շարք կարևորագույն ճյուղերով դուրս եկել առաջին տեղն աշխարհում։ Կոմունիստական շինարարության մեծ խնդիրները նրանից պահանջում են բազմապատկել ստեղծագործական ավյունը, արձագանքել կենսական խնդիրներին, բոլոր վճռական ճյուղերում դուրս գալ առաջին տեղը համաշխարհային գիտության մեջ։

Ընդհանուր գծերով այսպիսին է Ա. Մ. Թելունցի այս շահեկան աշխատության բովանդակությունը, մի դրքի, որը գրված է մեթոդոլոգիական ճիշտ դիրքերից, գիտական ու տեսական բավարար մակարդակով և հաշվի առնելով սովետական գիտության թեորիայի ու պրակտիկայի նորագույն նվաճումները։ Գիրքը գրված է լավ ոճսերենով, կարդացվում է հետաքրքրությամբ և հետաքրքրությամբ։ Նրա առավելություններից է և այն, որ հեղինակին զգալի չափով հաջողվել է խուսափել էմպիրիկ շարադրանքից, չնայած որ գրքում օգտագործված է հարուստ փաստական նյութ՝ գիտության նվաճումները մեր երկրի պրակտիկայում օգտագործելու վերաբերյալ։ Աշխատության մի այլ դրական կողմն էլ այն է, որ այն հագեցված է կոմունիստական պարտիականության ոգով, այնտեղ, ուր անհրաժեշտ է, հեղինակը մարքսիստական դիրքերից սուր քննադատության է ենթարկում բուրժուական գիտնականների հակագիտական տեսակետները ու կոնցեպցիաները։

Գրախոսվող աշխատությունը գերծ չէ որոշ թերություններից։ Այսպես, դրքի I գլուխը, որ ընդհանուր տեսական բնույթ ունի և նվիրված է, ինչպես ասել ենք, գիտության զարգացման ընդհանուր օրինաչափություններին, մեր կարծիքով կարելի էր զգալիորեն սեղմել և վերածել քիչ թե շատ հանգամանալից ներածության, քանի որ այդ գլխում քննարկվող նյութերին մեր փիլիսոփայական գրականությունը առանց այն էլ շատ է անդրադարձել։ Դրա փոխարեն լավ կլիներ աշխատության V գլխում ավելացնել մի ոչ մեծ բաժին, որը նվիրված լիներ այն հարցի տեսական քննարկմանը, թե ինչպիսին է լինելու գիտության դերն ու տեղը կոմունիստական հասարակարգի լիակատար հաղթանակի ժամանակ։ Դա հեղինակին հնարավորություն կտար խուսափել այն կաշկանդվածությունից, որն զգացվում է այս գլխում, ուր քննարկվում են միայն մոտակա երկու տասնամյակներին վերաբերող նյութերը։

Մեր կարծիքով նպատակահարմար կլիներ գրքի II գլխում մի առանձին բաժին հատկացնել այն հարցին, թե ինչպես սոցիալիստական հասարակարգում գիտության զարգացման նյութական նախադրյալների հզորացման հետ մեկտեղ ընդլայնվում է նաև գիտության գործունեության ասպարեզը։ Այս հարցին հեղինակը դժբախտաբար թռուցիկ է անդրադառնում։

Գրքում տեղ են գտել շատ վրիպակներ, որոնց միայն մի մասն է նշված վրիպակների ցանկում։

Այս բոլոր թերությունները դժվար չէ վերացնել Ա. Մ. Թելունցի այս օգտակար աշխատությունը հայերեն հրատարակելու ժամանակ, որը, մեր կարծիքով, խիստ ցանկալի է, մանավանդ, որ գիրքը հրատարակված է ընդամենը 1000 օրինակ տպաքանակով։

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ